գտանէք ի սմայ այն ինձ լիցի, զի ես յոյժ տկար էի և անարհեստ. Բ՞յց[1] այնքան[2] էր որ չկարացի գերիմաստ յոհաննէս կ՚թկոսի հրամանէն հետ լինիլ։ Արդ աղաչեմ, ով որ հանդիպիք սմայ յիշեցէք, ողորմի 5 ասացէք անպիտան դաղար գրչիս և դուք յիշեալ լիջիք ի ք՚է ա՚յ մերմէ. ամէն։

---

55. 1) Մեծ դիրքով մի ծածկագիր. տառերի վերին ծայրերը զարդարուած խաչաւոր կաթուղիկէներով. հիմքը կազմում է գլխագրաձև մի Ա, որի 10 երկու սիւնների գլխին կայ մի մի գլխագիր Ծ, իսկ սիւների վերին մասերը վերջանում են մի մարդկային դէմքով. ընթեռնվի են միայն մի քանի տառեր— Ծ, Ծ, Ա, Տ, Ի. ստորև կայ հետևեալ քառեակը.

(Նոտրագիր E-ի բաւական նման)

15 Կերպ խարսխիս այս հաստատեալ.
ի նոտարէս եղև կերտեալ.
ի մէջ յարկիս այս շաղկապեալ.
գիր երկաթե՚յ դիւրին լուծեալ.

Էջի ճակատին, ծածկագրի երկու կողմից նկարուած 20 են երկու միանման կանացի դէմքեր առանց ծնօտի։ Իսկ ծածկագրի մի կողքին, վարից դէպի վեր գրուած է.

մայր Ս՚ը Սիոն Ս՚ը եկեղեցի

---

[1] Ջ. տրմ. [2] Ջ. այն քան.